ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2019/11

ք. Երևան «14» 04 2020թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Պատվիրատու**), մի կողմից, և **Ինտերէներգիա ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Հ. Եսայանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **Կատարող**), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **շինարարական** աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին՝ ներառյալ նախագծման առաջադրանքին, համապատասխան և սահմանված ժամկետներում: Սույն կետով նշված ժամկետները սկսում են հաշվարկվել Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրվանից:

1.3 Սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված համաձայնեցումները և դրանց արդյունքում առաջացած հավելյալ աշխատանքները չեն նախատեսում պայմանագրով սահմանված ժամկետի փոփոխություն:

1.4 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամկետը կարող է փոփոխվել միայն նախագծման առաջադրանքի փոփոխման դեպքում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Ընդունել կամ չընդունել Պայանագրի 2.4.5 կետով առաջադրվող մասնագետի թեկնածությունը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային լուծումները՝ ներառյալ աշխատանքային ծավալները, համաձայնեցնել համայնքի, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ, ինչպես նաև այլ պետական լիազոր մարմինների (Շրջակա միջավայրի նախարարության, ԱԻՆ և այլն) և **այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ նախագծման ընթացքում, նվազագույնը երկու անգամ:**

2.4.5 Արտակարգ կամ չնախատեսված հանգամանքների ի հայտ գալու դեպքում Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար Հավելված 4-ում ներկայացված մասնագետների փոփոխության դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին: Ընդ որում, առաջադրվող մասնագետի որակավորումը և աշխատանքային փորձը պետք է լինի համարժեք կամ առավել փոխարինվող մասնագետի որակավորումից և աշխատանքային փորձից:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.1.1 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն ծառայության արդյունքը ներկայացնում է փորձաքննության: Եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն **30 աշխատանքային օրվա** ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և բացասական եզրակացությունը՝ ծառայության արդյունքի շտկման նպատակով: Կատարողը **Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում** շտկում է վերոնշյալ անհամապատասխանությունները և ծառայության արդյունքի շտկված տարբերակը ներկայացնում Պատվիրատուին պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով, որից հետո Պատվիրատուն ծառայության արդյունքը ներկայացնում է փորձաքննության:

3.1.2 Փորձաքննության արդյունքում փորձաքննողի կողմից տրամադրվում է դրական կամ բացասական եզրակացություն, որը Պատվիրատուն տրամադրում է Կատարողին: Պատվիրատուն, փորձաքննության բացասական եզրակացություն ստանալու դեպքում, 10 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և փորձաքննության բացասական եզրակացությունը՝ ծառայության արդյունքի շտկման նպատակով: Կատարողը **Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում** շտկում է վերոնշյալ անհամապատասխանությունները և ծառայության արդյունքի շտկված տարբերակը ներկայացնում Պատվիրատուին պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով, որից հետո Պատվիրատուն վերջնական արդյունքը ներկայացնում է փորձաքննության:

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն փորձաքննության դրական եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը, դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը և փորձաքննության դրական եզրակացությունը:

պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **5,780,000 (հինգ միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու և **3.1 կետով** սահմանված յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[22] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով հետևյալ դեպքերում և ժամկետներում՝

ա) <u>Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետ.</u> սույն պարագայում ուշացված աշխատանքային օրերի քանակը որոշվում է՝ համաձայն Պատվիրատուի կողմից ծառայության արդյունքի շտկված տարբերակը ընդունելու փաստը ֆիքսող 3.1.1 կետում նշված գրության,

բ) <u>Փորձաքննության ժամկետ.</u> տվյալ դեպքում տույժի վճարման սկզբնաժամկետ է համարվում 3.1.2 կետում նշված փորձաքննության բացասական եզրակացությունը Պատվիրատուի կողմից Կատարողին 3.1.2 կետով սահմանված կարգով տրամադրելու հաջորդող աշխատանքային օրը, իսկ ուշացված աշխատանքային օրերի քանակը որոշվում է՝ համաձայն պայմանագրի 3.2 կետով սահմանված՝ Պատվիրատուի կողմից ստորագրվող եզրակացության:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ

աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, որից ոչ ավելի, սակայն պայմանագրով սահմանված

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է **14** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	,,Ինտերէներգիա,, ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0054, Դավթաշեն 3-րդ թաղ. 12/70
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝01847856
Հ/Հ՝ 900018001231	Հ/Հ՝ 22029 0123532000
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝,,Ակբա Կրեդիտ Ագրեկոլ Բանկ,, ՓԲԸ
Գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյան	Տնօրեն Հայկ Եսայան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

«14» 04 Հավելված N 1
2020 թ. կնքված
ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության								
Հ/հ	ԳՄԱ ծածկագիր՝ CPV	անվանումը	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	Նախահաշ-վային գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
							հասցեն	ժամկետը**
1	71241200/26	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում	**«Մարզպետարանի վարչական շենքի վերանորոգում» նախագծման խորհրդատվական ծառայություններ**	դրամ	**5,780,000**	1	ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31	100 օր

**** Կից ներկայացվում է տեխնիկական բնութագիր (նախագծման առաջադրանքը)՝ Հավելված 1.1-ը:***

Սույն ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները և արտոնագրերը. ըստ «**Քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակում**» հետևյալ ոլորտների՝

Շափաբաժինների համարները	*Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները)՝ ներդիրը(ները)*	*Արտոնագրեր*
1	*2*	*3*
1	**բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ 1.ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր 2.Էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր 3.օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր: Էներգետիկայի օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր: Կապի օբյեկտների նախագծային փաստաթղթերի ՝ հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր :**	**Ճարտարապետի արտոնագիր բարձրագույն դասի Ա ենթադաս Ճարտարագետ-կոնստրուկտորի արտոնագիր բարձրագույն դասի Ա, առաջին դասի Ա1, երկորդ դասի Ա2 ենթադասեր**

*** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

,,Իներէներգիա,, ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0054,
Դավթաշեն 3-րդ թաղ. 12/70
ՀՎՀՀ՝ ՀՎՀՀ՝01847856
Հ/Հ՝ 22029 0123532000
Բանկ՝,,Ակբա Կրեդիտ Ագրեկոլ Բանկ,,
ՓԲԸ

Տնօրեն Հայկ Եսայան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1.1
«14» 04 2020թ. կնքված
***ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11** ծածկագրով պայմանագրի*

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1.	Նախագծման հիմքը	ՀՀ կառավարության որոշում, 22 օգոստոստի 2019 թվականի N 1135-Ն, ՀՀ Արգածոտնի մարզ , Աշտարակ <<Մարզպետարանի շենքի վերանորոգում>> ծրագրի նախագծանախահաշվային աշխատանքների վերաբերյալ: Համայնքի ղեկավարի կողմից տրված 22.11.2019թ. N 124 ճարտարապետահատակագծային առաջադրանք
2.	Պատվիրատու	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
3.	Նախագծման փուլ	Աշխատանքային նախագիծ
4.	**Ելակետային տվյալներ** • Շինության պատկանելիությունը հաստատող փաստաթուղթ • Գազամապատակարման, տեխնիկական պայման	• Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայական N 065-051-001 • Գազմատակարարման տեխնիկական պայման 29.01.2020 թիվ-03/20
5.	Կառույցի բնութագիրը եւ նախագծային լուծումներ	Նախատեսել մարզպետարանի շենքի վերանորոգում
6.	Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը	***Բարեկարգում*** 1. Նախատեսել շենքի սալվածքի վերականգնում ամբողջ պարագծով (անհրաժեշտության դեպքում կոյուղու դիտահորերի տեղափոխում) 2. Նախատեսել արտաքին լուսավորություն: ***Արտաքին հարդարում*** 3. Բոլոր տեղերում, որտեղ բացակայում է բազալտե գետնախարիսխը նախատեսել վերականգնում: 4. Լուսամուտները իրականացնել օդափոխության փեղկերով կամ բարդ կողպեքով: 5. Բոլոր պատուհանների արտաքին պատուհանագոգերի երեսապատումը նախատեսել քարով: 6. Բոլոր արտաքին դռները նախատեսել ալյումինից ջերմային կամրջակով: 7. Տանիքներում նախատեսել ձնարգելիչներ: 8. Տանիքի թիթեղը նախատեսել ցինկապատ գունավոր (ներառյալ ջրհորդանները, ձագարները և այլն): 9. Նկուղների բացակայության դեպքում, առաջին հարկերում նախատեսել ջրամեկուսիչ շերտ: ***Ներքին հարդարում*** 10. Բոլոր ներքին դռները բացառությամբ սան-հանգույցների խցիկների դռնակներից, նախատեսել ՄԴՖ-ից առանց դուրս եկած շեմի (порог): 11. Սան-հանգույցներում բոլոր կոմունիկացիոն խողովակները նախատեսել թաքնված: 12. Բոլոր ջեռուցման խողովակները d>20մմ նախատեսել պատյաններով (короб): 13. Ջեռուցման հասակացոր նախատեսել տրոբ

		14. Ջեռուցման մարտկոցները նախատեսել ալյումինե, պանելային: 15. Բոլոր հախճասալապատվող պատերին նշել հախճասալի բարձրության նիշը: 16. Բոլոր շենքերի ներսում նախատեսել դեկորատիվ ճաղաշարեր և բազրիքներ (մետաղ, փայտ կամ ապակի): 17. Սանհանգույցների սենքերի առաստաղները իրականացնել կախովի, 2.4մ-2.7մ բարձրությամբ, իսկ պատերի հախճասալերի նիշը ընդունել մինչև կախովի առաստաղը: 18. Հատակների սալապատումը իրականացնել չսահող սալիկներից: 19. Նախատեսել շերտավարագույրներ, իսկ սանհանգույցներում սանիտարական պարագաներ և հայելիներ: 20. Բոլոր ներքին և արտաքին դռներին նախատեսել արգելակիչներ: 21. Լուսատուները նախատեսել LED տիպի 22. Նախատեսել հակահրդեհային ազդանշանային համակարգ: 23. Նախատեսել էլէկտրատեխնիկական և ցածրահոսանք գծեր (հեռախոս, համակարգչային ցանց, տեսահսկման համակարգ), համաձայ պատվիրատուի պահանջների 24. Նախատեսել ճաշարան և խոհանոց 25. Հանդիսությունների դահլիճում և խոհանոցում նախատեսել օդափոխության ներածման և արտածման համակարգ 26. Հաշվի առնելով ջրամատակարարման ժամային գրաֆիկը նախատեսել ջրի կուտակման բակ, անհրաժեշտության դեպքում նախատեսել պոմպ ***Ծավալաթերթ*** 27. Նախատեսել արտաքին և ներքին գազամատակարարում, համապատասխան տեխնիկական պայմանի 28. Անհրաժեշտության դեպքում նախատեսել էլեկտրասնուցող մալուխի փոխարինում (հաշվիչից մինչև էլ. վահանակ) ***Ծավալաթերթ*** 1. Հավաք Ծավալաթերթի ենթակետերում նշել հղում գծագրի թերթին

Ավարտված նախագիծը ներկայացվում է պատվիրատուին ստորև ներկայացվող քանակություններով՝

Գիրք	Անվանում	Բովանդակություն	Քանակ	
			Հայերեն	Ռուսերեն
Գիրք-1	Բացատրական մաս	Բացատրագիր, հաշվարկներ, վերլուծություններ, բնապահպանական ռիսկերի նվազեցման միջոցառումների նկարագրություններ, ելակետային տվյալներ, Ճարտարապետահատակագծային	6	1

		նախագծման առաջադրանք և այլն		
Գիրք-2	Գծագրական մաս	Աշխատանքային գծագրեր (գլխավոր հատակագիծ, երկայնական և լայնական կտրվածքներ, կառույցների և հանգույցների կոնստրուկտիվ լուծումներ, բարեկարգում, ինժեներական ցանցեր, ջեռուցում, ոդափոխություն): Չափագրական գծագրեր (հատակագծեր, կտրվածքներ, ներառել լուսանկարներ): Նախագծվող կառուցների հատակագծեր, կտրվածքներ, հատույթներ, հանգույցներ և այլն Մ 1-100, Մ 1-50, Մ 1-20 : Կոնստրուկտիվ տարրերի գծագրեր, մանրամասն և հավաք մասնագրեր և այլն:	6	1
Գիրք-3	Աշխատանքային ծավալների ամփոփագիր	Աշխատանքային ծավալների մանրամասն նկարագրումով, ծավալների քանակներով, միավոր և ընդհանրական գների դատարկ սյունակներով:	6	1
Գիրք-4	Աշխատանքի կազմակերպում	Աշխատանքի կազմակերպման տեխնոլոգիական հիմնական պրոցեսների նկարագրություն, անհրաժեշտ մարդկային և մեքենա-մեխանիզմների քանակ գնահատում, աշխատանքի իրականացման օրացուցային գրաֆիկի կազմում ըստ աշխատանքների տեսակների, հենանիշերի աղյուսակներ, համաձայնեցումներ, օգտագործվող նյութերի և սարքավորումների տեխնիկական մասնագրեր ու նկարագրություններ, օգտագործվող նյութերի և սարքավորումների մասնագրեր, օգտագործվող նյութերի երաշխիքային ժամկետներ և այլն:	6	1
Գիրք-5	Նախահաշիվներ	Մանրամասն ըստ օբյեկների նախահաշիվների կազմում՝ • Ըստ Քաղշինի ֆորմաների	1	1

*Ներկայացնել միայն ամփոփ նախահաշվի ռուսերեն տարբերակը:

**Գիրք-1և 2-ում հայերեն և ռուսերեն տարբերակները կարող են համատեղվել:

Նախագիծը ներկայացնել նաև էլեկտրոնային (AutoCAD, Word, Excel և PDF) տարբերակով:

Նախագծի համաձայնեցումը

- Նախագծման ընթացքում նախագծային լուծումները, ներառյալ աշխատանքային ծավալները համայնքի և ՀՏՀՀ-ի գրասենյակի հետ:
- Նախագիծը համաձայնեցնել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագռգիռ կազմակերպությունների հետ, ինչպես նաև այլ պետական լիազոր մարմինների (Շրջակա միջավայրի նախարարության, ԱԻՆ և այլն) հետ ըստ անհրաժեշտության:

Այլ պահանջներ

▪Նախագծման ընթացքում, նախագծման առաջադրանքում կարող են մտցվել մասնակի փոփոխություններ և ճշտումներ:

▪Նախագիծը փորձաքննության ներկայացնում է պատվիրատուն:

▪Նախագծային փաստաթղթերը կնդունվեն պատվիրատուի կողմից միայն բոլոր անհրաժեշտ համաձայնեցումների և փորձաքննությունների դրական եզրակացությունների առկայության դեպքում:

▪ Նախագիծը պետք է համապատասխանի նախագծման առաջադրանքին ու ՀՀ տարածքում գործող շինարարական նախագծման նորմերին և կանոններին:

▪Նախագծային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ տարածքում գործող աշխատանքային գծագրերին ներկայացվող ստանդարտներին համապատասխան:

▪Նախագծողի կողմից շինարարության սկզբի պահին պետք է կատարվի կառույցի նշահարումը և հանձնվի կապալառուին:

Նորմատիվ վկայակոչումներ

ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որ. «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որ. «**ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**»:

ՀՀՇՆ II-6.02-2006 Սեյսմակայուն Շինարարություն:

Բացի նշվածներից նաև օրենքով տվյալ գործունեությունը կարգավորող այլ օրենսդրական ու նորմատիվ փաստաթղթեր:

Նախագիծը ներկայացնել համապատասխան ՀՀ-ում հրատարկման պահին գործող օրենսդրական և նորմատիվ փաստաթղթերի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	,,Ինտերէներգիա,, ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0054, Դավթաշեն 3-րդ թաղ. 12/70
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ՝ ՀՎՀՀ՝01847856
Հ/Հ՝ 900018001231	Հ/Հ՝ 22029 0123532000
Կենտրոնական գանձապետարան	Բանկ՝,,Ակբա Կրեդիտ Ագրեկոլ Բանկ,, ՓԲԸ
Գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյան	Տնօրեն Հայկ Եսայան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«14» 04 2020թ. կնքված
***ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			մարտ	մարտ	մարտ	հունիս	հուլիս	հուլիս	հուլիս	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	դեկտեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/26	Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում				**5,780,000**	**5,780,000**	**5,780,000**	**5,780,000**	**5,780,000**	**5,780,000**	**5,780,000**	**5,780,000**	**5,780,000**	**5,780,000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

,,Ինտերէներգիա,, ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0054,
Դավթաշեն 3-րդ թաղ. 12/70
ՀՎՀՀ՝ ՀՎՀՀ՝01847856
Հ/Հ՝ 22029 0123532000
Բանկ՝,,Ակբա Կրեդիտ Ագրեկոլ Բանկ
Տնօրեն Հայկ Եսայան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
***ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11** ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
***ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 4
«14» 04 2020 թ. կնքված
ՆՀԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/11 ծածկագրով պայմանագրի

Աշխատանքներին ներգրավված մասնագետների ցանկ

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	Որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը և կոնտակտային տվյալները
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.	թիմի ղեկավար	40 տարի	Աշխատանքների կազմակերպում	Ինտերէներգիա ՍՊԸ, 094150305
2.	Նախագծող Ճարտարապետ	15 տարի	Նախագծի Ճարտարապետ. մասի նախագծում	Ինտերէներգիա ՍՊԸ, 094150305
3	Ինժեներ-կոնստրուկտոր	38 տարի	Նախագծի կոնստրուկտոր. մասի նախագծում	Ինտերէներգիա ՍՊԸ, 094150305
4	Նախագծող ջրամատակարարման մասնագետ	38 տարի	Ջրամատակարարման և ջրահեռացման մասնագետ	Ինտերէներգիա ՍՊԸ, 094150305
5	Նախագծող էլ. մատակարարման մասնագետ	38 տարի	Նախագծողի էլ. մատակարարման մասի նախագծում	Ինտերէներգիա ՍՊԸ, 094150305

Ոչ հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	Որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը և կոնտակտային տվյալները
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5
1.	Նախագծող գազամատակարարման, ջեռուցման և օդափոխության մասնագետ	45 տարի	Նախագծող գազամատակարարման, ջեռուցման և օդափոխության մասնագետ	Ինտերէներգիա ՍՊԸ, 094150305
2.	Նախագծող գեոդեզիստ	43 տարի	Նախագծող գեոդեզիստ	Ինտերէներգիա ՍՊԸ, 094150305
3	նախահաշվորդ	35 տարի	նախահաշվորդ	Ինտերէներգիա ՍՊԸ, 094150305

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 9000018001231
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

,,Ինտերէներգիա,, ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0054,
Դավթաշեն 3-րդ թաղ. 12/70
ՀՎՀՀ՝01847856
Հ/Հ՝ 22029 0123532000
Բանկ՝,,Ակբա Կրեդիտ Ագրեկոլ Բանկ
Տնօրեն Հայկ Եսայան

/ստորագրություն/
Կ.Տ